

# Սայաթ Նովա

## Դարդ մի անի, ջան ու ջիգար

էսպես դիվանի, լավ տեղ ասած, որը գրոց հայերեն տառ, որը վրաց. թուրքերեն էլ ուզում էի հետը խառնել, բայց չխառնեցի:

Դարդ մի՛ անի, ջան ու ջիգեար, միտքըդ դիւաց չտեսնէ.
Աչք խաւարի, անգամ խուլանայ՝ էրեսըդ թաց չտեսնէ:

Վո՛ւնց արեգակը շուղքը տա, վո՛ւնց լուսինը լուս անէ.
Աւալ քու տեսնողը մեռնի՝ քիզ գըլխաբաց չտեսնէ:
Դուն գըլուխըդ մահի կու տաս, յիս էլ քիզ հիդ կու մեռնիմ.
Միր էդնէն թամամ աշխարհըս սով քաշէ, հաց չտեսնէ:

Թէ վուր չգամ ու չտեսնիմ, հազար բաբաթ բան կ'ոսիս.
Քաշկա մարդ վո՛ւնց գայ, վո՛ւնց խօսի, վո՛ւնց քի տըխրած չտեսնէ:

Աստուծու բերնեմէն առնիս մըխիթարիչ սուրբ հոգին.
էլ վաղ մեռնի Սայաթ Նովէն՝ ճիտըդ գըցած չտեսնէ:

Յատուկ Պոէմ